

ՄՏՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Ակոկել, առակոուկ

Առակոուկ «հակառակ, դիմադարձ» և առակոունք «հակառակություն» բառերը պատկանում են հազվագեղ վկայություն ունեցող բառերի թվին: Ստուգաբանության եղած փորձերից ամենից ավելի հավանական է Հ. Աճառյանին, որ կապում է բրբռ. ակոկիլ «կառչել, կովի բռնվել, կովել» բայի հետ և վերականգնում ընդհանուր *ակոուկ սկզբնաձևը:

Ուշադրություն է գրավում կոի բառի հետ ունեցած նմանությունը թե՛ ըստ իմաստի և թե՛ ըստ ձևի. վերջին դեպքում թերևս պետք է առանձնացնել և՛ նախահավելվածը, ինչպես և՛ ֆաղաղ և և՛ առ-և՛ սպել բառերում: Կոի բառը, մանավանդ բաղադրությունների մեջ, ունի ակոկիլ բային մոտ իմաստ, որ նշել է նաև Հ. Աճառյանը. կոուիլ նշանակում է «կառչել, կպչել», անկոի «անհաստատ», կոուան՝ «ոտքը դնելու տեղ», կոուեցուցանել «կառչեցնել, կպչել տալ»:

Կոի բառը, թեև որոշ վերապահությամբ, մենք ստուգաբանորեն կապել ենք գերմ. Krieg «կռիվ» բառի հետ: Հ. Աճառյանը այս նմանությունը համարում է պատահական այն բանի հիման վրա, որ գերմ. բառի «առաջին և հիմնական նշանակությունն է. «շանք» ըստ Kluge 280»: Սակայն Աճառյանը Ֆ. Կլուգեին քաղում է ոչ լրիվ. մ. վ. գերմ. krieg բառը ըստ Կլուգեի նշանակում է «լարում, ճիգ, ջանք (Anstrengung), ձգտում մի բանի, մի բանի դեմ կամ մեկի դեմ. դիմադրություն, ընդդիմություն, դիմադարձություն. վեճ, մրրցում. կռիվ», հ. վ. գերմ. chrēg-ը՝ «համառություն»: Ինչպես տեսնում ենք, այս իմաստները բավական մոտ են կոի, կոուան, ակոկիլ բառերի իմաստներին: Գերմ. Krieg բառը ծագում է հ.-ե. *gʷer- «ծանր» արմատից, որի *gʷeri- հիմքաձևի ածանցյալները նույնպես մերձավոր իմաստներ ունեն. հուն. βρεωός «ամուր, պինդ», βρεμη «ճնշում, սեղմում, գրոհ», ὑβρις «հանդգնություն, բռնություն», հ. իռլ. brig «ուժ, զորություն» և այլն:

Ա շ ա ն

Այս բառը հին գրավոր հուշարձաններում չի հանդիպում, բայց տարածված է բարբառներում աշան, հաշան ձևերով. այն նշանակում է «կալսելու ցորեն»: Սրանից կազմված է (հ)աշ(ա)նել (նաև (հ)աշան անել) բայը, որ նշանակում է «ցորենը կալը լցնել կալսելու համար»: Ստուգաբանության որևէ փորձ չի եղել:

Սովորական քննության դեպքում էլ երևում է, որ այն նման է աշուն բառին և հավանաբար կապված է նրա հետ: Վերջինս սովորաբար համեմատում են ուս. осенъ, պրուս. assanis, գոթ. asans «ամառ, հունձ» բառերի

հետ, բայց դժվարության է հանգրիպում հայերենի նախաձևի վերականգնումը: Սլավոնական, բալթիական և գերմանական ձևերի հիման վրա վերականգնվող *es-en/r-, *os-en/r- նախաձևերը հայերենի ձևը չեն բացատրում: Հոդվածի հեղինակը առաջարկել է կողմնակի *oskhon- նախաձևը, որ ամենից ավելի հավանականն է, բայց անբասիր չէ. այստեղ էլ առկա է մոտավորապես նույն դժվարությունը, ինչ գիրե-ի նախաձևի վերականգնման հարցում:

Ելնելով վերևում ասվածից՝ աշան-ի համար կարելի է վերականգնել *oskhո ձևը: Ինչ վերաբերում է իմաստին, ապա այն հեշտությամբ բացատրվում է բերվող զուգահեռների իմաստից. հմմտ. գոթ. asans «հունձ»:

Եղուստ

Եղուստ «իշխանական մի աստիճան» բառը գործածված է 636 թ. մի արձանագրության մեջ. «Ծս Գրիգոր եղուստր և Մարիամ իմ կին շինեցաք զսուրբ եկեղեցիս վասն մեր հոգւոց»: Հ. Աճառյանը (ՀԱԲ, 2, էջ 23) կապում է էլիստ-ութին «հունական իշխանական մի աստիճան» բառի հետ:

Եղուստ բառի ստուգաբանության որևէ փորձ չի կատարվել: Այն ակըն-հայտորեն ծագում է լատ. illustris «լուսավոր, լուսավալյ, պայծառափալյ, պայծառ» բառից, որ հավանաբար անցել է հունարենին և նրա միջոցով փո-խանցվել հայերենին: Լատ. բառը կայսերական շրջանում գործածվել է որպես բարձրաստիճան անձերի կոչում: Այս դեպքում էլիստ-ը թերևս տարբեր ծա-գում ունի:

Թուխ, թխել

Այս արմատի գրավոր վկայությունները ուշ են (Առաքել Սյունեցի, «Վարք հարանց»), բայց այն, անշուշտ, հին է և լայնորեն տարածված հայ բարբառ-ներում: Սկզբնական նշանակությունն է «խփել», երկրորդաբար մասնավորվել է հացը թոնրի պատին խփելու՝ թխելու համար, որից հացթուխ «հաց թխող» բառը:

Ստուգաբանության որևէ փորձ հայտնի չէ: Հ. Աճառյանը (ՀԱԲ, 2, էջ 204) նշում է միայն արաբ. taxx «թթխմոր», taxux «խմորը թթվեցնել» բառերի հետ ունեցած պատահական նմանությունը:

Ծթն հնդեվրոպական *(s)teuk- «հրել, խփել» արմատի *-k- աճականի համար ենթադրենք սաստկական *-kh- տարբերակը, ապա անհնար չէ թուխ-ը բխեցնել *teu-k-/tu-k- ձևի *tukh- տարբերակից: Հ.-ե. *(s)teu-k-ից են ծա-գում հուն. τῆχος «մուրճ. քարտաշի գործիք, դուր, կացին», τυχίζω «քար տա-շել», հ. վ. գերմ. dūhen «սեղմել, ճնշել», լատվ. tukstēt «թխկացնել», ռուս. ТКАТЬ «գործել, հյուսել», ТЫКАТЬ «խփել, բռթել, հրել» և արևելք:

Իւրաքանչիւր

Հին հայերենի գրավոր հուշարձաններում լայնորեն գործածված և նոր գրական լեզվին անցած այս բառը Հ. Աճառյանը իր «Հայերեն արմատական բառարանում» (2, էջ 254) դնում է շատուգաբանվածների շարքում: Կարծում ենք, որ այս դեպքում նա գերզգուշություն է հանդես բերել: Եվ իրոք, որ այս բառի սկզբի և վերջի բաղադրիչը իւր-ն է, կասկած չի հարուցում. որ -քանչ-ի քան-ը հնդեվրոպական ծագում ունի և ամենայն հավանականությամբ նույնն է քան-ի հետ (=լատ. quam), նույնպես անկասկած է: Կասկածի տեղիք է տվել միայն շ-ի բնույթը. ըստ ոմանց այն նույնն է ինչ բառի շ-ի հետ և գա-

լիս է հնդեվրոպական *k₁ye «և, էլ» ձևից (հմմտ. լատ. -que «և, էլ»), ըստ ուրիշների՝ շ-ն ոչ-ի կրճատ ձևն է:

Հարցը լուծելու համար հարկավոր է փանշ-ի համար գտնել որևէ հավաստի զուգահեռ և քիչ թե շատ համոզիչ կերպով բացատրել ամբողջ բաղադրության իմաստը: Կարծում ենք, որ փանշ-ի համար այդպիսի բացահայտ զուգահեռ է և նրա իմաստը բացահայտում է ավեստերեն k₁emci| «մի կերպ, ամեն կերպ, յուրաքանչյուր կերպ» բառը, որը, եթե մի կողմ թողնենք վերջին է-ն, ստուգաբանորեն համընկնում է փանշ-ի հետ և որոշում սրա, ինչպես նաև ողջ բաղադրության իմաստը փանշ-ը ծագում է հ.-ե. *k₁y am-k₁ye նախաձևից:

Մեկասէր

Այս բառը գործածված է միայն մեկ անգամ Մակաբայեցվոց գրքում՝ (դ. 6)՝ հետևյալ նախադասության մեջ. «Ամրածածուկ քողածիգ ծնկասէր հարսունք վարսս մերկացեալք»:

Հին հայկազյան բառգրքում այն կապվում է ծնգիմ (ծնկիմ) «թուլանալ, հալվել-մաշվել, տառապել», նոր հայկազյան բառգրքում՝ ծունգ(ն) բառի հետ, վերջինում այն բացատրված է՝ «որ սիրէ առ տնին նստել ի ծունկս կամ կապիլ ի տուն պարկեշտութեամբ. ընդասուն. տնասէր»:

Հ. Աճառյանը ծնկասէր-ը բացատրում է «պարկեշտ, ընտանեսեր» և հավանական համարում Հյունքարպեյեհեստյանի մեկնությունը, ըստ որի բառը թարգմանված է հուն. φιλόγυγος «ծնկասէր, երեխասէր, իր զավակների սիրող» բառից, որի γύγος-ը («ծնունդ») շփոթված է γόνος «ծունկ» բառի հետ: Մակայն այս մեկնությունը փոքր-ինչ բռնաղբոսիկ է:

Ավելի հավանական է կարծել, որ ծնկասէր բառի մեջ ծունկ-ը գործածված է արխաիկ «որդի, զավակ, սերունդ» իմաստով, որ պահպանված պիտի լիներ որևէ բարբառում: Այս կապակցությամբ բերենք Ա. Մեյի բացատրությունը հ.-ե. *g₁en- «ծնել» և *g₁en- «ճանաչել» արմատների կապի մասին, որ միաժամանակ հասկանալի է դարձնում g₁en- «ծնել» և g₁enu- «ծունկ» բառերի կապը: Շարադրելով Մեյի բացատրությունը՝ Աճառյանը գրում է. «Այս արմատը նույնն է հնիս. *g₁en- «ճանաչել» արմատի հետ: Կան մի քանի ցեղեր, որոնց մեջ ծննդյան ժամանակ որդու օրինական հաստատումը լինում է ձնյալը նստեցնելով հոր ծնկների վրա: Այսպես, հին Իսլանդիայում ծնյալին օտարելի է մերժել և անտառը գցել և կամ բնդունել՝ նստեցնելով ծնկների վրա: Ի՞նչ իսլանդերեն և սողոթերեն, որ-ին կոչվում է «ծնկան որդի». լատ. genuinus «բնածին, իսկական» բառի մեջ երևում է «ծունկ» բառը: Սրանցից հետևում է, որ որդուն ծնկների վրա նստեցնելով օրինականացնելը հին հնդեվրոպական մե սովորություն էր և «ծնանիլ» արմատը էպես նույնն է «ճանաչել» արմատի հետ (տե՛ս Meillet BSL № 83, էջ XV, ինչպես և BSL № 85, էջ XXXIII)»:

Հետաքրքրական է նշել, որ ռուս. колѣно «ծունկ» բառը ունի նաև «սեբունդ» իմաստը:

Կղե

Մատենագրական վկայությունների մեջ բայը հանդիպում է պատճառականի ձևով կամ կրկնությամբ՝ կղեգուցանիլ «մզել, զտել», կղկղել «քամոցից անցկացնել, մզել, զտել», կղկղանք «արտաթորություն, աղբ»: Կղել «մզել, զտել, քամել» բայի սկզբնական այս իմաստից բխեցվում է «քամվել (սրտի մասին), կարոտել, կաթոգնել» իմաստը, որ առկա է հետևյալ ձևերում՝ կղկղ-ղաք «կաթոգին, կարոտած, սիրակեղ», կղկղալ «կաթոգնել, կարոտով մեկի

հետևից նայել, հառաչել-մաշվել (սրտի մասին)», այլև կղկղել «իրեն քաշել, սիրով կապել»¹ և այլն:

Առաջարկված ստուգաբանությունները զուրկ են հավանականությունից:

Կղել բառի կեղ կամ կուղ արմատը գալիս է հնդեվրոպական *gʷel- արմատի *gʷel-, *gʷol- կամ *gʷl- (կազմության համար հմմտ. կուլ, կլանել) ձևերից որևէ մեկից. զուգահեռների մեջ հմմտ. հ. հնդկ. gālati «կաթում է, թափվում է, կորչում է», gālaya'i «հոսեցնում է, թափում է, քամում է, մզում է», հուն. βλάω «բխել, թափվել», հ. վ. գերմ. quellan, գերմ. quellen «բխել, դուրս ծորալ» և այլն: Այս լեզուներում ևս կան սկզբնական իմաստի՝ հոգեկան երևույթների վրա տարածվելու դեպքեր. այսպես, այս նույն *gʷel- արմատից է բխեցվում հուն. βούλωμαι «ցանկանալ» բայը:

Հ ա կ

Հակ արմատը հին մատենագրության մեջ հանդիպում է գերազանցապես բաղադրությունների կազմում (հմմտ. հակիմ «ծովել, միտել»), անկախ գործածություններ նշանակում է «հակառակ. բեռան կապոց. պատասխան. զուգորդ»: Բարբառներում անկախ գործածությամբ նշանակում է «հակում, բեռան հակ, բարձված բեռան մի կողմ. պայուսակի երկու կողմերից (աչքերից) մեկը». հակկալ բառը նշանակում է «բեռը պահելու փայտիկ», հակու, հակուանել, հակուն տալ հարադիր բառերը՝ «երկու կողմ կաղալ»:

Հակ արմատի սկզբնական «հակում, մի կողմ, կողմերից մեկը» իմաստը հնարավորություն է տալիս այն կապելու հնդեվրոպական peg- արմատի՝ *pog- կամ *pəg- (*pōg-ից) տարբերակներից մեկի հետ. հմմտ. հ. հնդկ. pākṣa— «թև. կող. կողմ. կես. մի մաս. կողմնակից», pakṣas- «թև, կողմ», լատվ. paksis «տան (շենքի) անկյուն» և այլն:

Չիւս «հյուսվածք» և հիւս «ծյան հյուս»

Այս բառերը հանդիպում են գրավոր աղբյուրներում և բարբառներում, բայց ստուգաբանության եղած փորձերը (տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 101—102) հեռու են հավանական լինելուց:

Իմաստով արտաքինապես իրարից հեռու գտնվող բառերի իմաստը բացատրվում է հնդեվրոպական *seuk- «թեքել, ծռել, պտտել, մղել, քշել, շարժման մեջ դնել» արմատի իմաստային զարգացմամբ. հմմտ. լիտվ. sùkti «պլուտրտել, ոլորել», sukrūs «շարժուն, արագաշարժ», ռուս. скать «ոլորել, հյուսել», сучить «ոլորել, հյուսել, միահյուսել»: Բերված զուգահեռներից երկում է, որ բացի «հյուսել» իմաստից զարգացել է նաև «շարժուն, արագաշարժ» իմաստը, որ կարող էր հիմք լինել «ծյան հյուս» իմաստի զարգացման համար:

Ծթե նկատի ունենանք, որ հ.-հ. *seuk- արմատը սկզբնական seu- արմատի *-k- աճականով ձևն է, ապա կարելի է հիմնավորում փնտրել նաև *seu-ի ածանցյալների մեջ: Եվ իրոք, այստեղ նույնպես առկա են ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ արմատների իմաստներին մոտ իմաստներ. այսպես, կելտական լեզուներից հին իռլանդերենում sūa(i)nem բառը նշանակում է «թոկ, պարան, թել», հնդկ. suv-, ավեստ. hav- արմատները՝ «շարժել, շարժման մեջ դնել»:

Հ.-հ. *eu-ի իւ-ի փոխվելու համար հմմտ. *seug->հիւծ: Նշենք, որ նույն *seuk- արմատից ենք մենք բխեցրել նաև հիւսիս(h) բառի հիւս- հատվածը՝

¹ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, 2, էջ 602:

«շրջված, հակառակ» իմաստով՝ *seukei k'ii- «հակառակ (կողմն) ընկած» >
> քիսիսի՝ ի տարբերություն հարաւ-ի, որ առնչվում է «առաջ» իմաստի հետ:

Մեզարեալ

Քայական այս ձևը գործածված է Մագիստրոսի թղթերում՝ «ի նորն պարտեալ և յեօթնիցն երկրորդացն դասէ շաղկապեալ յիւրն սիրեցեալ միակ մեզարեալ և անդուստ յերկեակն երրորդին թաւացեալն և յօդն յանգեալն»:
Հ. Աճառյանը (ՀԱԲ, 12, էջ 293) այս բառի կապակցութեամբ գրում է. «Խո-ւում է թվերի անիմանալի մի հարաբերության վրա, որով բառի իմաստը շատ մութ է մնում: Կա հուն. μῆγαρον «սրահ, ժողովարան, տաճարի մեջ պատգամախոսի տեղը», որից կարող էր Մագիստրոս մի բայ հորինել»:

Իրականում մենք գործ ունենք ոչ թե μῆγαρον բառի, այլ հավանաբար մեջբերած «չափազանց համարել, մերժել, արգելել» բայի հայացված և մեծա-րեյ բայի հետ բաղարկված ձևի հետ: Նշենք, որ հայ. մեծարել բայը ստուգա-բանորեն իրոք կապված է հուն մեջբերած բայի հետ:

Մ ի լ

Ըստ Հ. Աճառյանի²՝ Ղարաբաղի բարբառին պատկանող բառ է՝ «քառանկ-յունի՝ հարթ և տաշած գերան՝ սենյակի մեջ դնելու համար» իմաստով: Եթե հիմնական իմաստը կապենք տաշելու հետ, պապ այն կարելի է համեմատել հուն. σμίλη «դանակ, դուր, կտրիչ» բառի հետ, որ ծագում է հ.-ե. *smēi- արմատից *-l- ածանցով. հայերեն միլ-ը հանգում է *smi-lo- կամ *smi-lā նախաձևին:

Մուր, մուր

Միևնույն մու- արմատից -աւ և -ու ածանցներով կազմված այս բա-ռերը գրավոր հուշարձաններում հանդիպում են V դարից սկսած: Բարբառ-ներում տարածված է երկրորդ ձևը:

Հ. Աճառյանը (ՀԱԲ 32, էջ 339) միացնում է մու- «խենթություն, կատա-ղություն» արմատին (մուլի «խենթ, խենթաբար կապված, բուռն», մուլի «խեն-թացեալ»), բայց շարունակության մեջ գրում է. «Շատ կարելի է հայ. մուլ արմատը իր զանազան առումներով գումարումը լինի մի քանի տարբեր հնիս-արմատների, ինչ. մուլորիլ «սխալիլ» <հնիս. *mel- «խաբել» արմատից, հա-ցամուլ «հացառատ» <հնիս. *mel- «ուժեղ, մեթ» արմատից են»:

Իրոք մուր «խաբող, ցնորված, խաբված. սխալ, մոլորական» և մուր «մոլորված, թյուրած» բառերի արմատը տարբեր է մուլի, մուլի բառերի ար-մատից և կապված է մեղ- (մեղ-f, մեղանչել, մեղատը) արմատի հետ. այն զուգահեռներ ունի ավեստ. mairya- «խաբեբայական», լիտվ. mēlas «ստա-խոսություն», իռլ. mell «մեղք, հանցանք, սխալ», mellaim «խաբում եմ» բա-ռերի մեջ: Այս բանը նշել է նաև Ա. Մեյեն, բայց բերել անհավաստի զուգա-հեռներ՝ լատ. malus «չար», լիվտ. mylyti(s) > <լեհ. mylić(sie) «խաբել, մոլորեցնել» (կրավ. «խաբվել, մոլորվել»):

² Հ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1918, էջ 278:

Յառգղել

Այս բառը մեկ անգամ գործածված է Հովհան Ոսկեբերանի աշխատություններից մեկի թարգմանության մեջ. «Չյառգղեմք, յածեմք ի խրատ զըստահակսն»³: «Նոր հայկազյան բառգրքում» և Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» բացատրվում է «արգելել, սանձել»: Առաջինում այն կարծեք թե կապվում է գառագիղ բառի հետ՝ «իրր (ի գառագեղս) արգելու, սանձել», որի հիման վրա Հ. Աճառյանը ենթադրում է, թե հեղինակը թերևս «լավագույն մի ընթերցված է գտել»: Սակայն այդ դեպքում կրեբրվեր հենց այդ ընթերցվածը, և նոր բառահոգված չէր ստեղծվի:

Յառգղել բայի գղել-ը նույն ծագումն ունի, ինչ գայթաղիլ (գայթակղել) բայի գղիլ-ը. սրանց արմատն է գիղ, որ գիլ բառի տարբերակն է (հմմտ. ջիլ/ջիղ) և նշանակում է «քար». այն առկա է նաև գիղահմայ «գիլ՝ քար ձգելով հմայող, քարահմայ» բառի մեջ: Յառգղիլ-ը կազմված է յ- ու առ- ածանցներիով գղել բայաձևից (հմմտ. գլել «գլորել. հաղթահարել, հաղթել, գերազանցել») և, թերևս նշանակում է «մտոր քար դնել, խոչընդոտել»: Ինչ վերաբերում է գառագիղ բառին, այն ծագում է հունարեն γαλαῖγγρα «անասնավանդակ, բանտ» բառից, բայց բաղարկվել է գիղ (ըստ Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի՝ գիլ, որ քիչ հավանական է) բառի հետ:

Յ ա ր ա կ

Այս բառը հին մատենագրության մեջ հազվադեպ վկայված բառերից է. նշանակում է «երկար ժամանակ»⁴: Սրանից է կազմված յաբակիլ բայը, որ նշանակում է «միշտ մի բանի մեջ լինել, հանապազորդել»:

Հ. Աճառյանը, որ առանձացրել է յաբակ բառը համապատասխան վկայությունների հիման վրա և ճշգրտել յաբակիլ բայի իմաստը, ստուգաբանության որևէ փորձ չի կատարում: Մինչդեռ յաբակ-ը ակնհայտորեն ածանցված է յաբ արմատից, որ նախածանցի արժեքով գործածվելով ունեցել է նաև «միշտ» իմաստը՝ յաբագուարն «միշտ զվարթ», յաբածուպի «մշտածուպի», յաբաշարժ «մշտաշարժ»:

Ն ե պ ա կ

Այս բառը գործածված է Թովմա Արծրունու (IX—X դդ.) և Ստեփանոս Օրբելյանի (XIII—XIV դդ.) աշխատություններում: Հ. Աճառյանը (ՀԱԲ, 32, էջ 440) մեկնում է «մի տեսակ հարկ»: Սրա հիման վրա Ա. Փերիխանյանը և, սրա հետևողությամբ, է. Խուրշուդյանը⁵ նեպլակ-ի աղբյուրն են համարում պարթևական կամ վաղ միջին պարսկական nipāk «գրավ, գրավական» բառը⁶: Թեև իմաստային զգալի տարբերություն կա, բայց հնարավոր է իրանական բառի իմաստային համապատասխան զարգացման հնարավորությունը, և այս ստուգաբանությունն ընդհանուր առմամբ ընդունելի է: Հարկ ենք համարում միայն մասնակի ճշտումներ կատարել, մասնավորապես է. Խուրշուդյանի հոգվածի կապակցությունը:

³ Յովհաննու Ոսկեբերանի Մեկնարանութիւն թղթոցն Պողոսի, Ա, Վեներիկ, 1862:

⁴ Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 888:

⁵ А. Г. Периханян, Общество и право Ирана в парфянский и сасанидский периоды, М., 1983, с. 303, прим. 36; Э. Ш. Хуршудян, Армянское перак, ՊԸԲ, 1991, 1, с. 145.

1. Այն հանգամանքը, որ իրան. *i*-ն հայերենի նախաշեղջ վանկում չի ընկել, բացատրվում է նրանով, որ իրան. բառը հայերենում փոխառվել է III դարի սկզբներից հետո. ինչպես ցույց է տվել Հ. Հյուբշմանը, ի > (ը) հըն- շյունափոխությունը ավարտվել է նախասասանյան շրջանում⁶: նեպակ-ը մի- ջին պարսկական փոխառություն է: Ինչ վերաբերում է *i*-ի ե արտացոլմանը, ապա կարելի է ասել, որ այդպիսի դեպքեր կան, թեև հազվագեղ. հմմտ. մե- հեկաճ < mihrakān.

2. նեպակ բառի հայերեն մատենագրական վկայությունները պատկա- նում են IX—XV դդ., և ճիշտ չէ այն վերագրել նաև Եղիշեին, որի մոտ այդ բառը չի գործածված:

Պ ե զ ի ս

Այս բառը հանդիպում է Շիրակացու մոտ որպես մի տեսակ հեղուկա- շափ. «Պեղիսի կամ պեղիէս (այլ ձեռ. պեղեւ) կրկին ապակի է և ունի նոյն- շափ դ մասն քսեստի»: Հ. Աճառյանը (ՀԱԹ, 4², էջ 72) գրում է. «նշՔ դնում է քելիք, ք ձևէ, բայց սա նշանակում է «փայտե աման» և հակառակ է Շիրա- կացու բացատրության». նա միաժամանակ անհավանական է համարում Կ. Բրոկելմանի կարծիքը հուն. քելիք (ատտիկյան մի շափ) բառից ծագելու մասին:

Պեղիս բառը ծագում է կամ հուն. քելլից «գավաթ», կամ, որ ավելի հա- վանական է, վերևում հիշված քելլից «գավաթ» բառից. վերջինս շատ հին է և հանդիպում է միջինյան տեքստերում հոգնակի perike = π λικες ձևով՝ տա- րողությունների («ամանների») մի ցանկում⁷: Բացի քելլից «գավաթ», քել- լից «գավաթ» ձևերից, հայտնի է նաև քելեքի «մի հեղուկաշափ» բառը⁸:

Պ ո փ

Այս բառը հանդիպում է Խարբերդ-Սրզնկայի բարբառում և նշանակում է «սոխի, սխտորի հունդ կապած զուխ»⁹: Սա հավանաբար նույնն է Ջեյթունի բարբառի պիոփ բառի հետ, որ հանդիպում է «Աթրոխը (տերևով տուլմա) պի- քեօվ ու էյրընէօվ կ'ուտեն» նախադասության մեջ (Ուլնիա, էջ 45), որ բերում է Հ. Աճառյանը իր «Հայերեն գավառական բառարանում» (Թիֆլիս, 1913, էջ 926) պոփ ձևի տակ և վերջինս բացատրում «անծանոթ ուտելիքն մ'է» ձևով: Պետք է կարծել, որ այս նույն պոփ-ն է պոփհալէն բառի մեջ, որ հան- դիպում է Ջեյթունից առնված «Մսի քով կանաչ գուռլիտտեր, պոքհալէն կը դենն» նախադասության մեջ (Ուլնիա, էջ 39), և որը Հ. Աճառյանը այս վկա- յություն հիման վրա բացատրում է «կանաչ պղպեղ»¹⁰: Ս. Մալխասյանը իր «Հայերեն բացատրական բառարանում» (4, էջ 119), ամբողջովին հենվելով Հ. Աճառյանի վրա, նկատում է այս կապը՝ գրելով «հմմտ. պոքալէն (?)»:

Հայերեն բարբառային պոփ բառը ակնհայտորեն բնիկ հնդեվրոպական է և ունի *b(e)u- «փշել, ուռել» արմատից բխող այնպիսի զուգահեռներ, ինչ-

⁶ H. Hübschmann, Zur Chronologie der Armenischen Lautgesetze, «Kleine Schriften zum Armenischen», Heidelberg, 1976, S. 362.

⁷ Sh'u P. Chantraine, Dictionnaire étymologique de la langue grecque, 3, Paris, 1974, p. 876—877.

⁸ E. Furnée, Die wichtigsten konsonantischen Erscheinungen des Vorgriechischen. The Hague—Paris, 1972, S. 134.

⁹ Պ. Տեղ-Վարդանյան, Սրզնկա-Նամակ գավառաբարբառը և ազգագրական հուշեր, Երուսաղեմ, 1966, էջ 976:

պիսիք են լատ. bucca «այտ», շվեդ. puk «ուռուցք, գունդ», անգլ. poke «քր-
ւակ», գերմ. Pocke «ծաղկասպի, շեշ» և այլն: Հ.-ե. նույն արմատի *ph(e)u-
տարբերակից են ծագում փուֆ (փքալ, փքնում), փուչ (փշել), *p(e)u- տար-
բերակից՝ ոզի, հոզի բառերը:

Հնչյունական առումով պետք է ենթադրել *bou ok->*bok->պոֆ զարգա-
ցումը և պոչ բառի հետ տեսնել հնչյունական նույն զուգահեռը, ինչ փուֆ և
փուչ բառերի միջև:

Սիււու

Այս բառը հանդիպում է XIX դ. մի աղբյուրում. «Կոչեաց սպարապետն
զՄէհահատ փաշայն և ետ նմա գիր հրամանի կարգեալ զնա սիրուչ զբա-
ղում սահմանաց, այս է զօրաժողով»¹⁰, Հ. Աճառյանը (ՀԱԲ, 42, էջ 222—223),
հենվելով տեքստի վրա, այն բացատրում է «զորահավաք կազմակերպող
պաշտոնյա» և գրում. «Անշուշտ թրք. բառ է, բայց չունին ոչ Будагов, ոչ
Գրե և ոչ էլ Կամուս». որ վերջին երկուսում այս բառը կարող էր շարտացույցի
հասկանալի է, բայց փոքր-ինչ զարմանալի է, որ թուրքերենին լավատեղյակ
Հ. Աճառյանը ուշադրութուն չի դարձրել այս բառի և թուրք. süngü «քշող,
վարող» բառի նմանութան վրա. վերջինս բերված է արաբական գրությամբ
Ջ. Բուզաղովի բառարանում «կառապան, քշող, վարող, փոստատար» բացատ-
րությամբ¹¹: Թուրքերեն բառի իմաստն այստեղ մասնավորված է, բայց հնում
այն ունեցել է նաև «զորահավաքող, զինվորագրող» իմաստը¹²:

Տ ա խ

Բարբառային այս բառը նշանակում է «արու խոզ, վարազ»¹³: Ստուգա-
բանության որևէ փորձ հայտնի չէ:

Տախ բառի աղբյուրն է վրաց. taxı «արու խոզ, վարազ» բառը¹⁴: Այն
փոխառնված է նաև հյուսիսկովկասյան լեզուներից բեժտիներենում тлaxн
ձևով:

Փ ո ղ ի լ

Հանդիպում է փողի «հյուսել», փողի «հյուսվել, ընդելուզվել, իրար հետ
հյուսել, ընդելուզել», սփողի «ընդելուզել» ձևերով: Վերջինս Հ. Աճառյանը
(ՀԱԲ 42, էջ 514) համարում է սաստկական ս նախդիրով կազմված: Ստու-
գաբանության որևէ փորձ չի եղել:

(Ս)փող- արմատը ակնհայտ հնդեվրոպական կերպարանք ունի, բայց
այլ լեզուների համապատասխան ձևերից ոչ մեկը չի ունի չի ծածկում հայե-
րենի ձևերը և իմաստները: Հայերենի հիման վրա կարելի է վերականգնել
*(s)p(h)el- հնդեվրոպական արմատ և հայերենի փող- և սփող ձևերը բխեց-
նել *phol- և *sphol- ձևերից: Հայերենին ամենից ավելի մոտ են հնդեվրոպա-
կան *pel- «ծալել», *pel- «ծածկել, փաթաթել» կաշի, մորթի, կտոր, հա-

¹⁰ Դիւան Ռայց պատմութեան, Բ. Ժ, մանր մատենագիրք, ԺԾ—ԺԹ դար, Թիֆլիս,
1912, էջ 449:

¹¹ Л. З. Будагов, Сравнительный словарь тюркско-татарских наречий, 1, С. Пе-
тербург, 1869, с. 622.

¹² Հմմտ. В. В. Радлов, Опыт словаря тюркских наречий, IV, 1, С. Петербург,
1911, էջ 819:

¹³ Հմմտ. Ա. Սուրիապաճ, Հայց լեզվի հոմանիշների քառասյուն, Երևան, 1907, էջ 206:

¹⁴ N. Çubinaswili, Kartuli leksikoni, Tbilisi, 1961, էջ 377.

գուստ» և *plek'- «հյուսել, միահյուսել, ընդելուզել» նախաձևերը, որոնք հնարավոր է համարվում կապել իրար հետ¹⁵, բայց խանգարում են իմաստային տարբերությունները: Հ.-հ. *plek'-ը, որ իմաստով շատ մոտ է հայերենին, բնականաբար, ենթադրում է *pel- նախատիպ, բայց բերված երկու արմատները հեռու են իմաստով. կարծում ենք, որ հայերեն արմատը հնարավորություն է տալիս բացահայտելու այդ կապը. «հյուսել, միահյուսել» իմաստը դժվար չի կապել *pel- արմատի տարբերակների իմաստների հետ, եթե, մանավանդ, նկատի ունենանք առանձին լեզուների տվյալները, որոնք հնարավորություն են տալիս հասկանալու իմաստային անցումները. հմմտ. ավր. palē «ծալք, շարք, լուծ, զույգ», մ. իռլ. alt «կապ, միացություն, զոդվածք» և իռլ. feldr «վերարկու», մ. վ. գերմ. valte «ծալք, ոլորք, անկյուն» (*pel- «ծալել»), ռուս. пелена «շղարշ, քող, ծածկոց», հ. հնդկ. pa ja- «կտոր, գործվածք. հագուստ, սավան, փոռց» (*pel- «ծածկել»), այլև հուն. πλέχω, գերմ. flechten, ռուս. плести «հյուսել» (*plek'- «հյուսել»):

Г. Б. ДЖАУКЯН — Этимологии. — В статье дается этимология следующих армянских слов: ак'тик (а҃фак'тик) «противостоящий, сопротивляющийся», диал. ак'тк'ил «цепляться, ухватываться; бороться, ссориться», (и.-е. *g^{ue}g «тяжелый»; ср.-внем. kriek «усилие, стремление к...; противостояние, сопротивление; спор, ссора, борьба»), а҃шап «зерно, собранное для молотыбы» (связано с а҃шун «осень»; ср. русск. осень, прус. assanis «осень», готт. asans «осень; жатва»), elustr (какой-то титул) (<греч.<лат. illustris «сиятельный»), t'xel (t'ux-) «бить, ударить; печь, выпекать» (и.-е. *t^ukh- or' *(s)teu-k- «толкать, бить, ударять»), iwak'anc'iwg «каждый» (iwg «свой+канв^c < *k^{ua}m-k^{ue}), с^hkasēg «детолюбивый» (с^hпк *«потомство» при с^hпк «колени»), klel «цедить, выжимать» (и.-е. *g^uel-; ср. др.-инд. gālati «капает, течет», нем. quellen «бить ключом; просачиваться»), һак «наклон, уклон; против(положность); противоположная сторона, сторона: одна из двух сторон, половина; тюк» (и.-е. *reg-; ср. др.-инд. rākṣa- «крыло, сторона; половина»), һiws «плетение» и һiws «лави́на» (и.-е. *seu-k-; ср. лит. sūkti «крутить; быть прытким. проворным, быстрым, русск. скать, сучить»), megareal (греч. μεγαρω mēl (диал.) «балка, тесеная палка» (и.-е. *smēi- «резать, вырезывать»), molar, molor «заблуждающийся» (связано с mel-k^c «вина, грех» из и.-е. *mel-), уа҃гг'ел «препятствовать» у*af*g'el от gil/gil «камень», т. е. «положить камень перед...»), уа҃гак «долгое время; всегда» (от уа҃г «всегда»). перак «вид налога» (ср. перс. пірак «заклад?»), pelis «какая-то мера жидкости» (греч. πελίς; «кубок, чаша» при πελίχη «какая-то мера жидкости»), рок^c (диал.) «лужовица» (и.-е. *boџok- от *beu- «дуть; раздувать»), siwguj «вербовщик» (турецк. şırıcı), tax «кабан» (груз. taxi), p'olil «плести» (и.-е. *(s)p(h)el- при *pel- и *plek'-).

¹⁵ J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I, Bern und München, 1959, էջ 802—804 և 834—835: